ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶՏԱՐԿՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԶՏԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
6 մարտի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2007 թվականի N 208-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶՏԱՐԿՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԶՏԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Վերնագիրը փոփ. 05.04.12 N 451-Ն)

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրության գործունեությամբ զբաղվող զտարկող կազմակերպություններին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը փոփ. 05.04.12 N 451-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2007 թ. մարտի 1
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
հունվարի 25-ի N 208-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԶՏԱՐԿՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԶՏԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(Վերնագիրը փոփ. 05.04.12 N 451-Ն)

1. Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրության գործունեությամբ զբաղվող զտարկող կազմակերպության (այսուհետ՝ զտարկող կազմակերպություն) արտադրական տարածքները, շենքերը և շինությունները պետք է համապատասխանեն ՀՀՇՆ IV-11.03.01-04 «Արտադրական շենքեր» Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2004 թվականի մարտի 3-ի N 16-Ն հրամանով նախատեսված պահանջներին ու պայմաններին:

(1-ին կետը փոփ. 05.04.12 N 451-Ն)

2. Զտարկող կազմակերպությունը պետք է հագեցված լինի թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող սարքավորումներով:

3. Զտարկող կազմակերպությունը պետք է ունենա իր կողմից թողարկվող արտադրանքի համար հաստատված համապատասխան տեխնոլոգիական գործընթացի փաստաթղթեր, տեխնիկական կանոնակարգեր, որոնք նաև պետք է ապահովեն գործունեության իրականացման տեխնիկական անվտանգությունը:

4. Զտարկող կազմակերպության անվտանգությունը պետք է իրականացվի ռազմականացված պահակախմբի միջոցով:

5. Զտարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի մարդու կյանքի և առողջության, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման համար անհրաժեշտ, վտանգավոր մթնոլորտային արտանետումների, քիմիական թափոնների և այլ կեղտաջրերի մաքրման կայաններով և սարքավորումներով:

(Հավելվածը փոփ. 05.04.12 N 451-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**